



ԼԵՎՈՆ ԲԱՏԻԿՑԱՆ

(Բանասիրական գիտությունների թեկնածու)

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԸ՝ ՊԱՐԱԿԱՆՈՆ ԳՐՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ*

Էմինը հաստատում է, որ Ներսես Լամբրոնացիին գրել է «Հովհաննու աղօթքի» մեկնությունը միայն, ոմն Ստեփանոսի խնդրանքով, որին մեկնիչը «հայր ճըշմարտաւեր և իմաստաւեր» է անվանում և նրա խնդրանքը կատարում է «հնազանդութեամբ ու որդիական հպատակութեամբ»: Գիտնականի համար պարզ չի դառնում Ստեփանոսի ով լինելը և ենթադրում է, թե դա այն Ստեփանոսը պետք է լիժի, որին, Լևոն Բ թագավորին գրած թղթում, Լամբրոնացին անվանում է իր ուսուցիչը: Էմինը ճիշտ է կոսում, այդ «ոմն Ստեփանոսը», իրոք, իր ժամանակի բանասեր-գիտնական Ստեփան վարդապետ Հակոբեցին (Մանուկ) է, որը Ներսես Ծնորհալի, Գրիգոր Տղա և Գրիգոր Ապիրատ կաթողիկոսների օրոք եղել է Հոռովայի կաթողիկոսարանին կից քարձրագույն դպրոցի ուսուցիչներից մեկը, որի մասին և ակնարկում է Հ. Ղ. Ալիշանը:

«Աղօթքը» ունի «էր ընդ եղբայրսն» վերնագիրը, իսկ Լամբրոնացու մեկնությունը կոչվում է «Տեսություն ընդունեամբ Աղօթքից սուրբ աւետարանչին Յովհաննու ի խնդրոյ Ստեփանոսի վարդապետի Յակոբացոյ, ի Ներսէսէ աշակերտէ իւր և հոգևոր որդեկէ»: Լամբրոնացին իր մեկնությունը սկսում է անվավերականի քովանդակությամբ վերլուծությամբ: Հովհաննես ավետարանիչը կոճքի երկիսա է լինում, կրք մոր հետ գալիս է իր պապի տուն, ուր դաստիարակվում էր նաև Քրիստոսը: Ըստ անվավեր գրվածքի, Հովհաննեսը Հայր Հովսեփի աշակերտն է լինում: Հիտուսը, այդ ընտանիքում սիրել է Հովհաննեսին և

կապվել է նրա հետ մեծ սիրով: Այդ պատճառով ամենքը նրան մեծարկ ևն «վարդապետի սիրելի», «ուսուցչի զավակ» արտահայտություններով: Հովհաննեսը առաջին աշակերտներից մեկն է լինում, որ իր կյանքն ու գործունեությունը ընդմիշտ կապում է Քրիստոսի վարդապետության հետ:

Քրիստոսը խաչի վրա, Հովհաննեսին է հանձնարարում ծառայել և խնամել Աստվածամորը: Այդ հանձնարարությունը Հովհաննեսը տանում է սիրով, մինչև Աստվածածնի վերափոխումը: Դրանից հետո նա գալիս է Եղեւնիա: Դոմինոսիանոս կայսրը նրան արտաքսում է Պաթմոս: Կայսեր մահից հետո, մոտ հարյուր տարեկան հասակում, վերադառնալով Եղևնիա, Աստված հարմար է գտնում երկինք տանել նրան: Համբառմամբ պահին Հովհաննես երանելին իր վերջին աղօթքն է ասում:

Նոր կտակարանում եղած «Ս. Հովհան ավետարանչի կենսագրությունը» շատ փաստերով տարբերվում է Լամբրոնացու պատմածից: Այստեղ իրոք Հովհաննեսը Հակոբի փոքր եղբայրն է. մայրը՝ Սողոմեն, Հիտուսի ուսմունքի հետևող առաջին կանանցից մեկն է և ոչ Հովսեփի աղջիկը: Հովհաննեսի հայրը՝ Ջեքթեուսը՝ Գալիլեայի լճի ձկնորսներից է: Քրիստոսը Հովհաննեսին և Հակոբին տեսնում է Ըավակի Տեչ ճյուղում՝ ուղևանները կարկատելիս. և կանչում է նրանց իր մոտ՝ առաքելության: Նրանք Պետրոսի հետ միասին վաչելում են Փրկչի վստահությունը և ահանատու ու մասնակից դառնում նրա փառավորությանը՝ թարր լնում վրա, հոգևարքին՝ Գլխսմաննի պարտեզի մեջ:

Վերլուծելով «Հանգիստ Յովհաննու» Լամբրոնացին նկատում է, որ այն մեզ ամբողջությամբ չի հա-

* Ծարուսկված «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի № Է-ից:

ակ, որովհետև չունի սկիզբ և չունի շարադրանքի այն ձևերը, ինչը հատուկ է նույնատիպ գրվածքներին: Տարտոնի կախկույտը նաև զարմանում է, որ այն ավանդության մասին ոչ մի տեղեկություն չկա «Գործք Առաքելոց»-ում և տարակուսանքով ևճթադրում է, թե առաքյալների ժամանակներում անուշադրության ևն մատնվել Հովհաննու հանգստից առաջ եղած դեպքերը:

Լամբրոնացին կարծում է, թե այս գրվածքը ստեղծվել է առաջին դարի վերջին տարիներին՝ Հովհանն ավետարանչի յոթ աշակերտներից մեկի՝ Պրոքրոսի ձևերով:

Էմիլը Լամբրոնացու այս պնդումը ևս չի բնորոշում, որովհետև նրա կարծիքով «Հանգիստը» իր բնդհանուր բնույթով և պատմության մանրամասնություններով պատկանում է պարականոն գրվածքների շարքին և կրում է դրանց բոլոր հատկանիշները, ուստի «Գործք Առաքելոց»-ում տեղ գտնել չէր կարող: Այն հանգամանքը, որ նրա հեղինակը Պրոքրոսում է, Էմիլը նույնպես ժխտում է, որովհետև, պնդում է նա, գրվածքում իբրև հեղինակ հիշվում է Բիրոզի անունը:

«Հանգիստ Յովհաննու» ավանդության հնությունը և նրա թարգմանությունը հայոց գրերի գյուտից անմիջապես հետո, կասկած չի հարուցում: Սակայն պետք է նկատել նաև, որ այս անվավերականը իբրև գեղեցիկ ստեղծագործություն, տեղից-տեղ անցնելով՝ հարցատացել է տարբեր պատումներով և տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր գրչագրեր²⁰:

«Հանգիստ Յովհաննու» տպագրված է նաև «Թանգարան Հայկական»-ում, Մխիթարյանները օգտագործել են Բրիտանական թանգարանի թիվ 19728 գրչագրի լուսանկարը, որ տրամադրել է հայտնի հայագետ Կոնիքերը: Այդ գրչագիրը պատկանում է 14-րդ դարի սկզբներին, որի հիշատակարանում գրված է. «Գրեցա գիրքս այս որ կոչի Պրոխատ, որ ունի առ ինք հառաքելս զամենայն բանս և զգործս Յովհաննու ավետարանչի եղբար Տևառն՝ ի սուրբ ուխտս Միհնի, ընդ հովանեա Տիրամար սուրբ Աստուածածնի և ըն պ սրոցս, մատ յանտիկի դղեստս Պապառան: Արդ ստացա Կոստանդին քահանայ յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ամենայն զարմից իւրոց: Արդ աղաչեմ զամենեսին և առ ոտս ձեր անկանիմ. Գրեցա ի թուին Եօթն հարիւրերորդի յիսներորդի վեցերորդի» (1807)²¹:

Այստեղից պարզվում է, որ Հովհաննու «Անօթքը» թարգմանելիս Լամբրոնացին ձեռքի տակ ունեցել է Պրոքրոսին վերագրվող գրչագիր տարբերակներից մեկը, իսկ Լոնդոնի ձեռագրերում պահպանվածը նրա ընդօրինակությունը կարող է լինել:

Հովհանն ավետարանչին վերաբերող պատմությունները սրանով չեն վերջանում: Էմիլը թարգմանել է հարակից երեք անվավերականներ ևս, որոնք նվիրված են նրա առաքելական գործունեությանը՝ Պաթ-

մոս կղզում, Եղևսիացում, անապատներում և քարայրներում: Այդ անվավերականները հետևյալներն են. «Յաղագս կինոպասան և շարտրուստ կախարհութեանց նորա զոր արար առաջի Յոհաննու», «Յաղագս ավետարանին թէ որպիս պատմեցա ի Յոհաննու կամ թէ յորում տեղուոչ ընկալան» և «Տեսիք Յոհաննու»:

Ընդհանուր անվավերականների թվին է պատկանում «Պատմութիւն Յովսեփայ և կնոջ նորին Ասանթի» ավանդապատումը նույնպես, որը հայ գրականությունը պահպանել է անարատությամբ:

Այս անվավերականի ոտներեն թարգմանությունը, որ կատարվել է 1876—77 թթ. Էմիլի ձեռքով, առաջին անգամ հրատարակվել է նրա մահից հետո 1897 թ. Մոսկվայում լույս տեսած «Переводы и статьи Н. О. Эммы» ժողովածուում:

Գիտնականը այն թարգմանել է Լազարյան ճեմարանին պատկանող № 151 գրչագրից:

Թարգմանությունը առաջաբան ու ծանոթագրություններ չունի, ինչպես մյուսները: Այլևհն, այն անգամ ավարտված չէ: Ժողովածուի հրատարակչխմբագիր Գր. Խալաթյանցը ինքն է թարգմանել ու լրացրել անվավերականի վերջին երկու էջերը, որոնք տպագրված են առանձին տառատեսակներով ու փակագծերի մեջ: Հրատարակչը կարող էր չչարունակել, իհարկև, գիտնականի կիսատ թողածը, կամ, լավագույն դեպքում, հրատարակել նույնությամբ: Բայց, ինչպես գրում է Խալաթյանցը, «...նկատի ունենալով հուշարձանի կարևորությունը, մեք մեզ թույլ ենք տալիս լրացնելու այդ անջրան բացը՝ ուս թարգմանությանը առաջադրելով պակասող մասերը, հիմք ունենալով 1896 թ. վեներտիկում հրատարակված «Թանգարան հայկական հին ու նոր դպրութեանց» ժողովածուն, որի մեջ տեղադրված է նաև մեզ հետաքրքրող անվավերականը»²²:

«Պատմութիւն Յովսեփայ և կնոջ նորին Ասանթի» պարականոնը արևելյան ժողովուրդների կողմից ստեղծված շատ գեղեցիկ ստեղծագործություն է, որի հունարեն բնագիրը Սպերանսկու վկայությամբ մինչև վերջին ժամանակները հայտնի չի եղել: Գոյություն է ունեցել նրա լատիներեն ոչ լրիվ թարգմանությունը: Հունարեն բնագիրը թեև գտնվել է տասնիններորդ դարի վերջերին, բայց այդ ևս թերի և անկատար է եղել: Գիտնականների ջանքերը՝ վերականգնելու անվավեր գրվածքի լրիվ խմբագրությունը, երկար ժամանակ չի հաջողվել: Նրանք ստիպված են եղել դիմելու պալոնական թարգմանությանը, որը մինչև հայերեն թարգմանության հրատարակվելը միակն ու ամբողջական է եղել: Սպերանսկին գտնում է, որ հայկական օրինակը բառ առ բառ համապատասխանում է հունարեն բնագրի գտնված գլուխներին և իր ամբողջությամբ համընկնում է պալոնական թարգմանությանը: Սպերանսկու պնդմամբ հայկական տարբերակը պետք է նկատել երկրորդ կատարյալ խմբագրություն, որը կարող է լիովին փոխարինել հունական բնագրին:

²⁰ Տես Թանգարան Հայկական, Գիրք 3, 1904, վեներտիկ, էջ 192:

²¹ Թանգարան Հայկական, էջ 192:

²² Переводы и статьи Н. О. Э. էջ 79:

«Պատմութիւն Յովսէփայ» պարականոնը դիտարկել է իբրև շատ կարևոր հուշարձաններից մեկը, որ երբևէլ տեղեկել են արևելքի ժողովուրդները: Նրա ստեղծման ժամանակների և հեղինակների մասին մինչև օրս մեզ ոչինչ հայտնի չէ: Եփեսոս այն է, որ արևելքի պատմության և եկեղեցական գրականության բազմաթիվ մասնագետներ շատ են զբաղվել նրա մթին կողմերի լուսարանությամբ և պարզել են, որ այս գեղեցիկ գրվածքի տարրեր դրվագներ ստեղծվել են դեռևս Քրիստոսից էլ շատ առաջ և անցել են ասորիներին, արաբներին և արևելքի այլ ազգերին²⁵:

Հավոր մահապետի որդի Հովսէփ Գեղեցկի պատմությունը հայտնի է Հին կտակարանից (Ծմնդ. ԼԷ—Ծ):

Ջրույցում պատմվում է այն մասին, որ ապօրինի մամուլը—Ասանեթը—դուրս է ձգվում, Միքայել հրեշտակի ձեռքով տարվում Եգիպտոս և հանձնվում Պետափրես թագավորին: Պետափրեսի կինը ամուսնացելով սնուցում է Ասանեթին իբրև որդեգիր և երբ Հովսէփը Եգիպտոս է գալիս, նրան կնություն է առնում: Փարսիկանոսը Ասանեթի ծագման վերաբերյալ մի ուրիշ ավանդություն է պատմում: Ըստ այդ դրվագի, Հոր երանելին կնոջ մահից հետո, ամուսնանում է Հակոբի դստեր՝ Դինայի հետ, որից ծնվում է Պետափրեսը, ապա՝ Ասանեթը, որը դարձավ Հովսէփի կինը:

Ասանեթի ծագման ավանդությունը, շատ փոփոխություններ է կրում: Ըստ ասորական գրչագրերի, Այուքեմի որդի Այուքեմը պղծում է Ծմավունի և Ղևի քույր Դինային: Վերջիններս վրեժխնդիր են լինում և սրի քաշում քույր պուրջմահիցներին, նրանց ոչ մի ծառանց չթողնելով: Դինան եղբայրներից վախենալով հեռանում է անապատ և այնտեղ ծնում իր գավակին: Հետո՝ մոր աչքերի առաջ Օվն աստծու արծիվը հափշտակում է մանկանը և վեր խոյանում:

Մանկանը այստեղ նույնպես խնամում է Պետափրեսը: Սակայն վերջինս ոչ թե թագավոր է, այլ՝ քրմապետ: Հովսէփը գալիս է Եգիպտոս, ներկայանում Փարավոնին: Նրա խելքի և գեղեցկության համբավը տարածվում է ամենուր և նա ամուսնանում է Պետափրեսի դստեր հետ, չիմանալով, որ իր քրոջ աղջիկն է:

Հովսէփի՝ Եգիպտոսում գտնված ժամանակ Դինան նույնպես դուրս է գալիս իր եղբորը ողջունելու: Տեսնելով նրա գեղեցիկ կնոջը, նա ամաչում է իր կորցրած աղջկան: Ներկաներին հայտնի է դառնում այդ արտաշարժ պատմությունը և քոյրը միաբերան փառք են տալիս Աստծուն: Ահա միևնույն պատմության երեք տարրեր դրվագները, որոնք գունագարդված են կրոնական մտածողության զարդանախշերով, ալլաբանական հրայրքներով ու առասպելական չափերով: Սակայն դրանք իրենց խորքում թաքցնում են պատմական ճշմարտություններ հին եգիպտացիների, եր-

բայեցիների, ասորիների փոխնարարությունների մասին:

Այսպես՝ Միքայել հրեշտակապետի մասնակցությունը, որ ներթուծված է առաջին դրվագում, գեղարվեստական հնարանք է՝ ցույց տալու համար հին եգիպտացիների և երբայեցիների բարեկամական հարաբերությունները: Ասորական աղբյուրներում պահպանված Ասանեթի առասպելական ծննդի գրույցը թճազույններից մեկն է, որն ալլաբանական ու խորհրդավոր բողի տակ Դինայի և Ասանեթի պատմությունները զուգակցում է Ասորեստանի, Եգիպտոսի և Խարակի միջև եղած պատմական անցքերի նկարագրությանը:

Ասանեթի «ծննդաբերության» ավանդավիպը ամբողջանում է իր ավարտին է հասնում «Պատմութիւն Յովսէփայ և կնոջ նորին Ասանեթի» անվավերականում:

Հին արևելքի գեղարվեստական մտքի գերազանց արտադրանք է այս ավանդությունը: Այստեղ Հովսէփն ու Ասանեթը փառաբանվում են իբրև բարձր անհատականություններ՝ իրենց անձնական, կրոնական ու բարոյական դիմանկարներով: Նրկում էլ գծագրված են իրենց գեղեցկության և ողջամտության մեջ: Ասանեթը՝ քրմապետի դուստրը, իր ազնվական գեղեցկությամբ ու վեհությամբ իր արժանավայել կեցվածքով ու հեթանոսական գաղափարներով ջերմեռանդ կուսպաշտ է: Հովսէփը վեհ ու արիտոկրատիկ դիմագծերով, ասորական ոսկեղեն ճարձանդով ազնիվ ծիրանին ուներին ձգած, աղամանդակուտ ոսկյա թագը գլխին, մի ձեռքին արքայական գավազանը, մյուսին՝ ձիթնու ճուղը, հպարտորեն անցնում է եգիպտական Արեգ քաղաքի փողոցներով և պիտի հյուրընկալվի Պետափրես քրմի ողջակում:

Պատուհանից նայող Ասանեթը գերվում է նրա գեղեցկությամբ ու շքեղությամբ: Ծուտով սկսվում է նրանց ծանոթությունն ու ճշանդության արարողությունը: Ասանեթը կամենում է համբուրել իր համար այդքան պաշտելի էակին, բայց Հովսէփը թույլ չի տալիս՝ ստելով, որ կենդանի Աստված (իմա՝ Քրիստոս) պաշտող մարդը չի կարող ընդունել այն շքեղների հաճույքը, որոնք պղծված են անխոս կուրքերի համբույրով:

Այդ մերժումը չափազանց ազդում է գեղեցիկ օրիորդի վրա և նա դառնորեն լաց է լինում: Հովսէփը աղոթում և սփոփում է նրան: Ասանեթը ապաշխարում է և Աստծուն աղոթում, որպեսզի իրեն մաքրի կուսպաշտական մտքերից: Այդպես էլ լինում է: Նրանք ամուսնանում են: Որսխությունը տևում է յոթ օր: Փարավոնը Հովսէփին կոչում է ուստր Աստծո, իսկ Ասանեթին՝ դուստր Բարձրայի: Փարավոնի որդին, Ասանեթի գեղեցկությամբ տարված, Ծմավունին ու Ղևին մեծ գուժար է խոստանում, որպեսզի սպանեն Հովսէփին: Սակայն սրանք չեն համաձայնվում: Նա այդ դավադրությունը կազմակերպում է Գամի և Գադի միջոցով, իսկ ինքը որոշում է սպանել Փարավոնին, որովհետև վերջինս շատ էր սիրում Հովսէփին: Դավադրությունը ձախողվում է և չարությունը պատժվում: Նրանից հետո 48 տարի Եգիպ-

²⁵ Հ. Բարսեղ Հ. Սարգսեան, Ուսումնասիրությունք հին կտակարանի անվավեր գրոց վրա, Վենետիկ, 1898, էջ 108—109:

տուսին թագավորում են Ասաննին ու Հովսեփ Գեղեցիկը: Այնուհետև Հովսեփը թագը հանձնում է Փարավոնի կրտսեր որդուն, որը հոր ժառանգ ժամանակ դեռ նորածին էր, և ինքը մնում է Եգիպտոսի արքայաճայր, մինչև իր կյանքի վերջը:

Այս է «Պատմություն Յովսեփայ և կնոջ նորին Ասանիֆ» անվավերականի համառոտ բովանդակությունը: Էմինը, անշուշտ, նկատի ուներ այս հուշարձանի գրական-գեղարվեստական արժեքը՝ որպես արևելյան ժողովուրդների մտածողության մե, և այն թարգմանել է ռուսերենի, որպես ծանոթացուցիչ հին Եգիպտոսի աշխարհագրությանն ու բնությանը, փարավոնների ժամանակներից եկող հիշատակներից ու կենցաղային այլապես մանրամասներից, որոնք նպաստում են արևելքի ժողովուրդների պատմության ուսումնասիրությանը:

Իր բնույթով, մտահղացումներով և շոշափած հարցերով միանգամայն հետաքրքիր ստեղծագործություն է նաև «Պատմություն երանելույն Ջովսիմոսի չորժամ գմտա աճեր լերկիրն երանելեաց» պարականոն գրվածքը:

Առաջին անգամ ռուսերեն թարգմանությունը տպագրված է Էմինի ձեռագրերից՝ նրա «Переводы и статьи» ժողովածուում: Առաջարան և ծանոթագրություններ չունի: Գր. խալաթյանցի վկայությամբ՝ գիտնականին քննադիր է ծառայել Լազարյան ճեմարանում պատկանված 17-րդ դարի մի գրչագիր:

Այս անվավերականը պատկանում է «ուխտագնացությունների» կամ «ուղևորությունների» շարքին: Այդպես է նշվում է անվավերականների ցուցակներում՝ «Ջուսիմոսի ուղևորությունը Բրահմանների մոտ» («Хождение Зосимы к брахманом»): Սա մի փոքրիկ դրվագ է «երանելեաց երկրի» մասին միջնադարում ստեղծված պատմությունների մեջ: Այն ժամանակ այս ավանդապատումը եղել է հույժ տարածված, երբ միջնադարյան մտածողները կամենում էին պարզել հետաքրքրական մի հարց—ինչպե՞ս հասկանալ երկրային դրախտը՝ իրական ու մարմնավոր, թե՛ հոգևոր ու երևակայական: Պարզ ասած՝ դրված էր երկրի վրա «Եդիսակական դրախտի» գոյության և չգոյության խնդիրը:

Քրիստոնեական գրականության մեջ ևս ստեղծվեցին այդօրինակ գրվածքներ, ինչպես Մակարի և Ջուսիմոսի պատմություններն են, որոնք Աստու գիտությանը ուխտագնացություն են կատարում դեպի «երանելիների» երկիրը, ուր տիրում է Աստու շունչը, արդարությունն ու անմեղությունը, քրիստոնեական հավատարմությունը:

Էմինը թարգմանել է նաև հայկական «Վարք սրբոյն Թադեոսի և Բարդուղիմեոսի առաքելոց Հայաստանի» պարականոնները և հրատարակել է դարձյալ «Православного обозрениа» ամսագրում, 1877 թ. հունիս-հուլիս ամսվա գրքերի հավելվածներում: Այս թարգմանությունը նույնպես ունի առաջարան ու ծանոթագրություններ: Առաջարանում գիտնականը բացատրում է անվավերականների կարևորությունը գիտության ու բանասիրության մեջ, ցույց է տալիս

նրանց ստեղծման պատմությունը և պատմական նշանակությունը:

Հատ այդ առաջարանի, Էմինին երեք հանգամանքներ են մղել թարգմանելու այս անվավերականները՝ պատմական այն փաստերը, որ ընկած են նրանց հիմքում, պարականոն գրվածքներին հատուկ այն երանգները, որոնք դրսևորում են քրիստոնեության առաջին շրջանի մարդու կենդանի երևակայությունը և երրորդ, որ դրանք պատկանում են հազվագյուտ հնություն ունեցող հուշարձանների շարքին:

«Թադեոս առաքյալի մասին,—գրում է Էմինը,— արևմուտքում շատ քիչ գիտեն: Իսկ այն, ինչ գիտեն, սպա դա սահմանափակվում է Եվսեբիոսի հաղորդած համառոտ տեղեկություններով»:

Միայնության հայր Մկրտիչ Ավգերյանը պնդում է, որ Թադեոս առաքյալի վարքը կա նաև ասորերեն լեզվով²⁴: Սակայն դա կապ չունի հայերեն վկայության հետ, որովհետև ասորերեն լեզվով պահպանված օրինակում նկարագրվում է Թադեոսի գործունեությունը միայն Ասորիքում: Մինչդեռ հայերեն անվավերում առաքյալը ներկայացվում է Հայաստանում, հայերի միջավայրում: Այստեղ նրա գործունեությունը սկսվում է Եդեսիա՝ հայոց թագավոր Արգաթի մոտ գալով և վերջանում է նահատակության պատմությամբ:

Հայ գիտնականների շրջանում Էմինից առաջ իշխում էր այն կարծիքը, թե Թադեոս առաքյալի պատմությունը գրվել է մեր թվագրության 1-ին դարի 50-ական թվականներին, ասորերեն գրերով: Այն, ենթադրում էին շատերը, գրված պետք է լինի նրա աշակերտներից մեկի ձեռքով, առաքյալի մահից անմիջապես հետո:

Էմինը ոչ պնդում և ոչ էլ ժխտում է գրության այդ ժամանակը, նա համոզված է, որ այն ստեղծված է մինչև Գր. Լուսավորչի ծնունդը՝ 2-րդ կամ 3-րդ դարերում, այսինքն՝ մինչև 257 թիվը: Այս հարցում նա հենվում է Մ. Խորենացու «Պատմության» վրա, ուր պատմաճայրը հիշում է «սքանչելի ծերի»²⁵ գրույցներից նաև հետևյալը. «...Արդ ՚ի քնակելն Անակայ ի դաշտին Արտագու, պատահէ սորա տեղի օթարանին մօտ առ դիրս սրբոյ Առաքելոյն, որպէս թէ ՚ի ներքազոյն սրկսպանի խորանին (իմա՝ Թադեոս առաքյալի —Լ. Բ.) և անդ ասնն գլորթին մօր սրբոյ և մեծի Լուսաորչին: Վասն որոյ և զնորին Առաքելոյ շնորհն ընկալեալ, որ առ հանգատարանա նորին զինելութիւնն էառ, զնորին ելից զհոգևոր մշակութեանն պակասութիւնն»²⁶:

²⁴ Լ. Մ. Ավգերյան, Լիակատար վարք և վկայարանությունը սրբոց որ կան ի հին Տօնացոցի եկեղեցոյ Հայաստանեաց, Վեներիկ, 1810, էջ 240:

²⁵ «Ո՛րմ նկատի ունի պատմաճայրը «սքանչելի ծեր» անելով՝ հայտնի չէ. կարծում են, թե նկատի ունի Սահակ Պարթև կաթողիկոսին, իր ուսուցչին»,— գրում է Ստ. Մալխասյանը, Հայոց պատմության իր թարգմանության 144-րդ ծանոթագրության մեջ:

²⁶ Մատենագրութիւնը Մովսէսի Խորենացոյ, Վեներիկ, 1843, էջ 155:

Այս նշանակում է, ենթադրում է Էմինը, որ այս պարականոնը գոյություն է ունեցել մինչև Գրիգոր Լուսավորչի ծնունդը:

Էմինը համամիտ է ման այն կարծիքին, որ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների պատմությունները առաջին անգամ գրի են առնված ասորերեն լեզվով: Բայց որ այն գրվել է առաքյալի աշակերտներից մեկի ձեռքով, հավատ չի ներշնչում գիտնականին: Այս պատմությունը նրա կարծիքով, հայերեն է թարգմանվել 5-րդ դարի առաջին կեսերին՝ մարտիկոսի տառերի գյուտից հետո, ասորի Ծովուկի ձեռքով:

Այդ ենթադրությանը հիմք են տալիս վարքագրության վերջում գետնդրված տողերը, որ մեջ է իերում Էմինը. «Я епископ Самуелъ вѣдостоинныи рабъ Христовъ, перевелъ это сказаніе о мученической кончинѣ св. апостола Фаддея и св. девы Сандухта и подорилъ его всеи Арменіи». (Շու, անարժան ծառա Քրիստոսի Մամուկ եպիսկոպոս, թարգմանեցի այս պատմությունը և Թադեոս առաքյալի և ս. Մանդուխտ կույսի մահատակության և ընծայեցի ամբողջ Հայաստանին): Էմինի կարծիքով այս տողերում հիշված Մամուկ եպիսկոպոսը Ծովուկ ասորին է, որը հայոց կաթողիկոսական զանր հափշտակեց 432—439 թթ.:

Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» 2-րդ գրքի 84-րդ գլխում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների վկայարանությունները օգտագործում է իրեն աղբյուր և ավելացնում. «...Գտանի որ ինչ առ սոցա ժամանակա՝ (խոսքը Արգար թագավորի Անանուն որդու և նրա թեոորդի Սանատրուկի մասին է—Լ. Բ.) յառաջագոյն գրեալ յայլոց, զգալուստ Առաքելոյն ՚ի Հայս, և հաւատալ Սանատրուկ, և թողոյ զհաւատն լերկիղէ Գախարարացն Հայոց, և կատարումն Առաքելոյն և որք ընդ նմա՝ ՚ի գաւտին Ծաւարշան՝ որ այժմ կոչի Արտագ...»: Հետո էլ՝ Բարդուղիմեոս առաքյալի մասին. «Բայց վիճակեցաւ

Հայոց և Բարդուղիմեոս Առաքեալ, որ և կատարեցաւ առ մեզ յԱրեւանոս քաղաքի»²⁷:

Ահա փաստեր, որոնք հիմք են դառնում Էմինի ասելու, թե այս վարքագրությունները ստեղծվել են Մարտոկ Մաշտոցից առաջ և ունեն իր սկզբունք: Մակագն Խորենացու հիշատակությունները մեզ հասած վարքի խմբագրության մեջ չկան: Էմինը այս մեկնաբանում է նրանով, որ մեր ձեռքը հասած օրինակը պակասավոր է կամ թերի, իսկ Խորենացու ունեցածը զուցե կատարյալ ու ամբողջական է եղել:

Մամուկ Արեղյանը Թադեոս առաքյալի և Մամդուխտ կույսի վկայարանությունը համարում է զուտ հայկական²⁸, ինչպես Էմինը: Սակայն, ինչպես այս վարքագրությանը գրադվող բոլոր գիտնականները, այնպես էլ Էմինը, չեն բացատրել այն պատճառները, որոնք առիթ են դարձել նմանօրինակ գրական երկերի ստեղծմանը: Այդ մասին շատ համոզիչ ձևով խոսում է Արեղյանը: Նա ցույց է տալիս, որ 5-րդ դարից էլ առաջ «սկսվում են պատրիարքական աթոռների գերադասության, նրանց հնության կամ ծագման վերաբերյալ փառասիրական վեճերը»²⁹: Ինչպես բոլոր քրիստոնյա ազգերի, այնպես էլ հայ եկեղեցու հայրերի և հայ վկայարանությունների նըպատակն է եղել լոկ հայոց եկեղեցու սկզբնավորության հնացումը, կապելով այս կամ այն առաքյալի անվան հետ: Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների պատմության ստեղծումը հետապնդում է հայոց եկեղեցու սկզբնավորությունը հասցնել մինչև առաջին դար և կապել առաքյալների ժամանակների հետ, Գրիգոր Լուսավորչից առաջ, ինչպես հաստատում են պատմական աղբյուրները:

²⁷ Մատենագրութիւնք Մովսէսի Խորենացոյ, Վեճեոիկ, 1848, էջ 111—12:

²⁸ Մ. Արեղյան, Երկեր, հտ. 2, Երևան, 1968, էջ 371—75:

²⁹ Նույն տեղը:

